



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 11 (468) «26» ապրիլի 2022թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ</b>		
194	«Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի մարտի 26-ի ՆՀ-584-Ն հրամանագրում լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-699-Ն հրամանագիրը.....	4
<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
195	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի N 51 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 409-Ն որոշումը.....	5
196	«Արցախի Հանրապետության ոստիկանության զինանշանի կանոնադրությունը և դրա նկարագրությունը հաստատելու ու Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N 35-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 410-Ն որոշումը.....	6
197	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 351-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 413-Ն որոշումը.....	9
198	«Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացվելիք 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 416-Ն որոշումը.....	10
199	«Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 6-ի N 369-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 420-Ն որոշումը.....	15
200	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 14-ի N 617-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 424-Ն որոշումը.....	16
201	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի N 467-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 426-Ն	

	որոշումը.....	17
202	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 662-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 675-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 431-Ն որոշումը.....	20
203	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 13-ի N 1098-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 432-Ն որոշումը.....	22
204	«Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 433-Ն որոշումը.....	24
205	«Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 434-Ն որոշումը.....	25
206	«Մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ լուծարելու մասին» ԱՀ կառավարության N 435-Ն որոշումը.....	27
207	«Մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ լուծարելու մասին» ԱՀ կառավարության N 436-Ն որոշումը.....	30
208	««Մերան» փակ բաժնետիրական ընկերությունը և մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ լուծարելու մասին» ԱՀ կառավարության N 437-Ն որոշումը.....	36
209	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 17-ի N 222-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 439-Ն որոշումը.....	41
<b>ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>		
210	««Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները սահմանելու և Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 30-ի N 31-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 10-Ն որոշումը.....	45
211	«Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 27-ի N 56-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային	

	ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 11-Ս որոշումը.....	47
	<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>	
212	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 33-Ս հրամանը.....	48

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 26-Ի ՆՀ-584-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի մարտի 26-ի «Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության պայմաններում իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների մասին» ՆՀ-584-Ն հրամանագրում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ.

«4. Սույն հրամանագրի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված հավաքների ազատության իրավունքի սահմանափակումը չտարածել Յեղասպանության գոհերի հիշատակի օրվա կապակցությամբ 2022 թվականի ապրիլի 23-ին և 24-ին անցկացվելիք միջոցառումների վրա:»:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. ապրիլի 22  
Ստեփանակերտ  
ՆՀ-699-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2022թ.

N 409-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 51 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Հարկային ծառայողների ռոտացիա իրականացնելու կարգը հաստատելու մասին» N 51 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «օրենքի» բառից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել.

2) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ռոտացիայի ենթակա հարկային ծառայության պաշտոններն են՝

- 1) հարկային մարմնի վարչության պետ,
- 2) հարկային տեսչության պետ,
- 3) հարկային մարմնի վարչության պետի տեղակալ,
- 4) հարկային մարմնի բաժնի պետ,
- 5) հարկային տեսչության պետի տեղակալ,
- 6) հարկային մարմնի գլխավոր հարկային տեսուչ,
- 7) հարկային մարմնի խմբի ղեկավար,
- 8) հարկային տեսչության բաժնի պետ,
- 9) հարկային մարմնի ավագ հարկային տեսուչ,
- 10) հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչ,
- 11) հարկային մարմնի հարկային տեսուչ,
- 12) հարկային տեսչության ավագ հարկային տեսուչ,
- 13) հարկային մարմնի 1-ին կարգի մասնագետ,
- 14) հարկային մարմնի 2-րդ կարգի մասնագետ,
- 15) հարկային տեսչության հարկային տեսուչ,
- 16) հարկային տեսչության 1-ին կարգի մասնագետ,
- 17) հարկային տեսչության 2-րդ կարգի մասնագետ:».

գ. 3-րդ կետում «առավելագույնը երկամյա» բառերը փոխարինել «առնվազն մեկամյա» բառերով,

դ. 5-7-րդ կետերից հանել «ծառայության» բառը,

ե. 6-րդ կետում «Հարկային» բառը փոխարինել «հարկային» բառով:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

15 ապրիլի 2022թ.

N 410-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՈՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N 35-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ն ք ն շ ու մ է***.

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության ոստիկանության զինանշանի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության ոստիկանության զինանշանի նկարագրությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի «Արցախի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 184 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 35-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ**

1. Արցախի Հանրապետության ոստիկանության զինանշանը (այսուհետ՝ զինանշան) այն նշանն է, որը ցույց է տալիս ծառայողների և զինծառայողների, ինչպես նաև սպառազինության, տեխնիկայի և այլ զույքի պատկանելությունը Արցախի Հանրապետության ոստիկանությանը (այսուհետ՝ ոստիկանություն):

2. Զինանշանը դրվում է ոստիկանության պետի աշխատասենյակում, ինչպես նաև պատկերվում է ոստիկանության դրոշի վրա:

3. Զինանշանի պատկերը գետեղվում է ոստիկանության կենտրոնական ապարատի վարչությունների և ինքնուրույն բաժինների, կենտրոնական ապարատի անմիջական ենթակայության ստորաբաժանումների, ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության և շրջանային բաժինների, ինչպես նաև ոստիկանության զորքերի կենտրոնական ապարատի և ենթակա ստորաբաժանումների ու զորամասերի անկյունադրոշմակների կամ անկյունադրոշմակով դրոշմաթղթերի վրա:

Զինանշանի պատկերը սահմանված կարգով դրվում է նաև ոստիկանության ծառայողների և ոստիկանության զորքերի զինծառայողների համազգեստների տարբերանշանների ու առանձնանշանների, ինչպես նաև անվանական զենքի վրա:

4. Զինանշանի պատկերի կիրառումը թույլատրվում է տպագրական, գովազդային-տեղեկատվական և հուշանվերային արտադրանքի (ծրագրեր, օրացույցներ, կրծքանշաններ, ժամացույցներ, թղթապանակներ և այլն), տեսաժապավենների վրա՝ համաձայնեցնելով ոստիկանության հետ:

5. Զինանշանի պատկերի կիրառման այլ դեպքերը սահմանվում են ոստիկանության պետի կողմից:

6. Զինանշանը պահպանվում է օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ**

1. Արցախի Հանրապետության ոստիկանության զինանշանը (այսուհետ՝ զինանշան) համաձայն ձևի, բաղկացած է սրից և վահանից (սուրը խորհրդանշում է ուժ և հարկադրանք, իսկ վահանը՝ պաշտպանություն, անվտանգություն):
2. Զինանշանի լայնության և երկարության հարաբերությունն է 1:2:
3. Զինանշանի վերին մասում նշված են «ԱՀ», իսկ ստորին մասում՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:
4. Արույրից պատրաստված վահանի կենտրոնում Արցախի Հանրապետության զինանշանն է:
5. Վահանի եզրին կից շրջանակն ունի խորություն, որը լցված է մուգ կարմիր արծնով:
6. Վահանի միջով անցնող սուրը, որը զինանշանի վրա երևում է իր ծայրով և բռնակով, նույնպես պատրաստված է արույրից:
7. Բռնակն ունի 10 ուռուցիկ փաթույթ և վահանի մոտ սահմանափակվում է երկկողմանի երիզով:
8. Զինանշանի հիմնական գույնը ոսկեգույնն է:
9. Արույրից պատրաստված զինանշանը տեղադրվում է բարձր որակի մուգ շագանակագույն փայտե պատվանդանի վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

Ձև

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ**





**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

15 ապրիլի 2022թ.

N 413-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի N 351-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ռ ր ո շ ու մ է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Արցախի Հանրապետությունից անտառանյութի որոշ տեսակների արտահանումը արգելելու մասին» N 351-Ն որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արգելել Արցախի Հանրապետության տարածքից գործափայտի, տեխնոլոգիական փայտի, վառելափայտի, կողահան և ոչ կողահան տախտակի, տակառատախտակի, եզրատախտակի և փայտածուխի արտահանումը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2022թ.

N 416-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացվելիք 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ց Ա Ն Կ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ  
2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ  
ՆՊԱՍՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ)  
ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ  
ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ)  
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ**

Դասիչը	Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը		Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
		Ընդամենը	Այդ թվում՝ բանակից զորացրված	
<b>ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆ</b>				
<b>022301.00.6</b>	<b>Փիլիսոփայություն</b>			
	022301.01.6 Փիլիսոփայություն	1		
<b>022801.00.6</b>	<b>Արևելագիտություն</b>			
	022801.02.6 Թյուրքագիտություն	1		1
<b>023201.00.6</b>	<b>Լեզվաբանություն</b>			
	023201.12.6 Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն	1		1
	023201.13.6 Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն	1		1
<b>031301.00.6</b>	<b>Հոգեբանություն</b>			
	031301.01.6 Հոգեբանություն	1		
<b>031801.00.6</b>	<b>Միջազգային հարաբերություններ</b>			
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ	1		1
<b>051201.00.6</b>	<b>Կենսաքիմիա</b>			
	051201.03.6 Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա	1		
<b>053101.00.6</b>	<b>Քիմիա</b>			
	053101.04.6 Մանրի անվտանգություն	1		
<b>054101.00.6</b>	<b>Երկրաբանություն</b>			
	054101.01.6 Երկրաբանություն	1		
<b>054201.00.6</b>	<b>Աշխարհագրություն</b>			
	054201.02.6 Քարտեզագրություն և կադաստրային գործ	1		
<b>056802.00.6</b>	<b>Ֆինանսական մաթեմատիկա</b>			
	056802.01.6 Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	1		1
<b>061101.00.6</b>	<b>Բնֆորմատիկա (համակարգչային գիտություն)</b>			
	061101.02.6 Բնֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	1		1
<b>061901.00.6</b>	<b>Տեղեկատվական անվտանգություն</b>			
	061901.01.6 Տեղեկատվական անվտանգություն	1		1
<b>092301.00.6</b>	<b>Սոցիալական աշխատանք</b>			

	092301.01.6 Սոցիալական աշխատանք	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>14</b>		<b>7</b>
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>				
<b>041301.00.6</b>	<b>Կառավարում</b>			
	041301.03.6 Լոգիստիկա	1		
<b>061102.00.6</b>	<b>Ծրագրային ճարտարագիտություն</b>			
	061102.01.6 Ծրագրային ճարտարագիտություն	1		
<b>061103.00.6</b>	<b>Համակարգչային ճարտարագիտություն</b>			
	061103.01.6 Համակարգչային ճարտարագիտություն	1		
<b>061104.00.6</b>	<b>Տեղեկատվական համակարգեր</b>			
	061104.02.6 Արհեստական բանականությամբ համակարգեր	1		
<b>071302.00.6</b>	<b>Էլեկտրատեխնիկա</b>			
	071302.02.6 Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ	1		
<b>071401.00.6</b>	<b>Էլեկտրոնիկա</b>			
	071401.01.6 Էլեկտրոնիկա	1		
	071401.02.6 Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	1		
<b>071402.00.6</b>	<b>Ավտոմատացում</b>			
	071402.01.6 Ավտոմատացում	1		
<b>071502.00.6</b>	<b>Մեքենաշինություն և նյութերի մշակում</b>			
	071502.02.6 Տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ	1		
<b>071506.00.6</b>	<b>Սարքաշինություն և չափագիտություն</b>			
	071506.04.6 Չափիչ սարքավորումներ և համակարգեր	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>10</b>		
<b>ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>				
<b>021201.00.6</b>	<b>Ղիգայն</b>			
	021201.05.6 Միջավայրի ղիգայն	1		
<b>031101.00.6</b>	<b>Տնտեսագիտություն</b>			
	031101.01.6 Տնտեսագիտություն	1		1
<b>073102.00.6</b>	<b>Քաղաքային տնտեսություն</b>			
	073102.02.6 Ջերմագազամատակարարում և օդափոխություն	1		
<b>073201.00.6</b>	<b>Շինարարական ճարտարագիտություն</b>			
	073201.08.6 Շենքերի նախագծում	1		1
	073201.09.6 Ավտոճանապարհներ, կամուրջներ, թունելներ	1		1
	073201.10.6 Հիդրոտեխնիկական և հիդրոէներգետիկ կառուցվածքներ	1		1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>6</b>		<b>4</b>
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>				
<b>041101.00.6</b>	<b>Հաշվապահական հաշվառում և հարկում</b>			
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	1		1
<b>041401.00.6</b>	<b>Շուկայագիտություն (մարքեթինգ)</b>			
	041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/	1		1
<b>061104.00.6</b>	<b>Տեղեկատվական համակարգեր</b>			
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	1		1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3</b>		<b>3</b>

<b>Խ. ԱԲՈՎՅԱԼԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>				
<b>011401.00.6</b>	<b>Մասնագիտական մանկավարժություն</b>			
	011401.14.6 Պարարվեստ	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1</b>		
<b>ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲԻՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>				
<b>023201.00.6</b>	<b>Լեզվաբանություն</b>			
	023201.01.6 Թարգմանչական գործ - չինարեն և հայերեն լեզուներ	1		1
	023201.02.6 Միջմշակութային հաղորդակցություն (ըստ լեզուների) - անգլերեն լեզու	1		1
<b>101801.00.6</b>	<b>Սերվիս</b>			
	101801.01.6 Սերվիս	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3</b>		<b>2</b>
<b>ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ</b>				
<b>021502.00.6</b>	<b>Կատարողական արվեստ</b>			
	021502.01.6 Գործիքային կատարողականություն			
	դուդուկ	1		
	քանոն	1		
	թառ	1		
	քամանչա	1		
	021502.04.6 Վոկալ արվեստ			
	Ակադեմիական երգեցողություն	1		
	Ժողովրդական երգեցողություն	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>6</b>		
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ</b>				
<b>021201.00.6</b>	<b>Դիզայն</b>			
	021201.04.6 Համակարգչային գրաֆիկա	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1</b>		
<b>ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ</b>				
<b>021503.00.6</b>	<b>Թատերական արվեստ</b>			
	021503.02.6 Ռեժիսուրա	1		
<b>021801.00.6</b>	<b>Արվեստի տեսություն և պատմություն</b>			
	021801.01.6 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>2</b>		
<b>ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>				
<b>091201.00.7</b>	<b>Բուժական գործ</b>			
	091201.01.7 Բուժական գործ	5		7
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5</b>		<b>7</b>
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ</b>				
<b>101401.00.6</b>	<b>Սպորտ</b>			
	101401.02.6 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1</b>		
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>				
<b>031802.00.6</b>	<b>Ագրոէկոնոմիկա</b>			
	031802.01.6 Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա	1		
<b>072101.00.6</b>	<b>Պարենամթերքի տեխնոլոգիա</b>			
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	1		
	072101.02.6 Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն	1		
	072101.03.6 Սննդամթերքի անվտանգություն	1		
<b>081101.00.6</b>	<b>Ագրոնոմիա</b>			

	081101.02.6 Բոլսերի սլաշտպանություն	1		
	081101.03.6 Ջերմատնային ագրոտեխնոլոգիա	1		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>6</b>		
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՑՖԻՆ ՏԵՂԵՐ</b>	<b>2</b>	<b>1</b>	<b>7</b>
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐԸ</b>	<b>60</b>	<b>1</b>	<b>30</b>

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

19 ապրիլի 2022թ.

N 420-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N 369-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ու մ է**:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 6-ի «Արցախի Հանրապետության տարածք հավի, հավի մսի և սննդային ենթամթերքի ու հավի ձվի ներմուծումը ժամանակավորապես դադարեցնելու մասին» N 369-Ն որոշման 1-ին կետում «վրա» բառից հետո լրացնել «, և պետության կարիքների համար արդեն իսկ կնքված պայմանագրով (համաձայնագրով) ձեռքբերվելիք հավի, հավի մսի և սննդային ենթամթերքի ու հավի ձվի, որոնց ներմուծումն իրականացվում է համապատասխան պայմանագրի (համաձայնագրի) ներկայացման դեպքում» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի ապրիլի 10-ից ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլի 2022թ.

N 424-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 617-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 14-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 617-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 2-րդ կետի 4-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) դոնորական ձվաբջջի ձեռքբերում:».

3) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը չեն ներառում փոխնակ մոր և դոնորական սերմնաբջջիների համար փոխհատուցման ծախսերը:».

4) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Դոնորական սերմնաբջջի օգտագործմամբ, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում փոխնակ մոր, սերմնաբջջիների դոնորի ծախսերը փոխհատուցվում են շահառուի կողմից:».

5) Ձև N 1-ից հանել «, դոնորական ձվաբջջի» բառերը.

6) Ձև N 2-ում «դոնորական ձվաբջջով (դոնորին փոխհատուցումը՝ շահառուի կողմից)» բառերը փոխարինել «դոնորական ձվաբջջով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլի 2022թ.

N 426-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 30-Ի N 467-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «իե.3» կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի «Վարորդի սթափության վիճակի գննության կարգը, այդ գննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը հաստատելու մասին» N 467-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ» բառերը փոխարինել «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ, ՈՒՂԵԳՐԻ,» բառերով.

2) նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «իե.3» կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**».

3) 1-ին կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետ.

«5) վարորդի սթափության վիճակի գննության ուղեգրի ձևը՝ համաձայն թիվ 5 հավելվածի:».

4) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում.

ա. 2-րդ կետը «ուղեգրերի» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ ուղեգիր)՝ համաձայն սույն որոշման թիվ 5 հավելվածով հաստատված ձևի» բառերը,

բ. 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 20-րդ կետը «կարող է» բառից հետո լրացնել «գրավոր» բառը.

5) որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 6-րդ կետում «0,23» թիվը փոխարինել «0,12» թվով.

6) լրացնել նոր թիվ 5 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2022 թվականի ապրիլի 20-ի N 426-Ն որոշման

«Հավելված 5  
ԼՂՀ կառավարության  
«30» հունիսի 2009թ. թիվ 467-Ն որոշման

Ձև

**ՈՒՂԵԳԻՐ**  
**ՎԱՐՈՐԴԻ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ**

օրինակ 1  
տրվում է գննություն կատարողին

N 000000

\_\_\_\_\_

Ք. \_\_\_\_\_

գնության ներկայացման օրը, ամիսը, տարին, ժամը, րոպեն

գնության իրականացման վայրը (շրջան, քաղաք)

Ես՝ \_\_\_\_\_  
գնության ներկայացնողի պաշտոնը,

\_\_\_\_\_

կոչումը, ազգանունը, կրծքանշանի համարը,

**Քաղաքացի** \_\_\_\_\_

ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամիսը, ամսաթիվը, տարին

Բնակվող \_\_\_\_\_ հեռախոս \_\_\_\_\_

համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 265-րդ  
հոդվածի՝ ներկայացնում եմ սթափության վիճակի գննության

\_\_\_\_\_

բուժնաստատության անվանումը

\_\_\_\_\_

գնության ներկայացնողի ստորագրությունը

----- կտրման գիծ -----

**ՈՒՂԵԳԻՐ**  
**ՎԱՐՈՐԴԻ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ**

օրինակ 2  
կցվում է վարչական նյութերին

N 000000

\_\_\_\_\_

զննության ներկայացման օրը, ամիսը, տարին, ժամը, րոպեն

Ք. \_\_\_\_\_

զննության իրականացման վայրը (շրջան, քաղաք)

Ես՝ \_\_\_\_\_

զննության ներկայացնողի պաշտոնը,

\_\_\_\_\_

կոչումը, ազգանունը, կրթական աստիճանի համարը,

**Քաղաքացի** \_\_\_\_\_

ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամիսը, ամսաթիվը, տարին

Բնակվող \_\_\_\_\_ հեռախոս \_\_\_\_\_

համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 265-րդ հոդվածի՝ ներկայացնում եմ պթափության վիճակի զննության

\_\_\_\_\_

բուժնաստատության անվանումը

\_\_\_\_\_

զննության ներկայացնողի ստորագրությունը

1-ին օրինակն ստացա՝ \_\_\_\_\_

պթափության վիճակը ստուգող աշխատակցի պաշտոնը, ազգանունը, ստորագրությունը

\_\_\_\_\_ 20\_\_ թ. »:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022թ.

N 431-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի  
N 662-Ն ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 675-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 18-ի «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների իրականացման կարգը և սակագները հաստատելու, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցների օգտագործման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության համար արտաբյուջետային հաշիվ բացելու մասին» N 662-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4.1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«4.1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների անդամները (ծնող, ամուսին, երեխա), ինչպես նաև Արցախի Հանրապետության բռնազավթված համայնքների, այդ թվում՝ Մարտունու շրջանի Ճարտար քաղաքային համայնքի և Թաղավարդ գյուղական համայնքի բռնազավթված հատվածների ու Քաշաթաղի շրջանի Բերձոր, Քարեգահ, Ներքին Սուս և Աղավնո համայնքների բնակիչները մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ազատվում են նոտարի կողմից մատուցվող՝ սույն որոշմամբ սահմանված վճարովի ծառայությունների համար վճարումներ կատարելու պարտավորությունից»:

2) որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 7-րդ և 11-րդ կետերում «Ֆինանսների» բառը փոխարինել «Ֆինանսների և էկոնոմիկայի» բառերով:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Նոտարական գործողությունների և քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» N 675-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի

Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների անդամներին (ծնող, ամուսին, երեխա), ինչպես նաև Արցախի Հանրապետության բնագավառում համայնքների, այդ թվում՝ Մարտունու շրջանի Ճարտար քաղաքային համայնքի և Թաղավարդ գյուղական համայնքի բնագավառում հատվածների ու Քաջաթաղի շրջանի Բերձոր, Քարեգահ, Ներքին Սուս և Աղավնո համայնքների բնակիչներին մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ազատել հետևյալ պետական տուրքերի վճարումներից՝».

2) որոշման 2-րդ և 3-րդ կետերում «Ֆինանսների» բառը փոխարինել «Ֆինանսների և էկոնոմիկայի» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

21 ապրիլի 2022թ.

N 432-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 1098-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 13-ի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից վերամշակված բնափայտի վաճառքի և բնափայտի ու վառելափայտի մթերման գները հաստատելու մասին» N 1098-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2022 թվականի ապրիլի 21-ի N 432-Ն որոշման

«Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի հոկտեմբերի 13-ի N 1098-Ն որոշման

**Գ Ն Ե Ր**  
**«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**  
**ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՄՇՆԱԿՎԱԾ ԲՆԱՓՈՅՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԲՆԱՓՈՅՏԻ**  
**ՈՒ ՎԱՌԵԼԱՓՈՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ**

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Ծառայության անվանումը (մեկ միավորը 1 խորանարդ մետր)	Մեկ միավորի գինը (առանց ԱԱՀ)
1.	Գործափայտի վերամշակման արդյունքում ստացված կողահան տախտակի վաճառք	
ա)	կաղնու, հացենու, լոբենու	168790
բ)	հաճարենու	111158
2.	Գործափայտի վերամշակման արդյունքում ստացված ոչ կողահան տախտակի վաճառք	
ա)	կաղնու, հացենու, լոբենու	142306
բ)	հաճարենու	93549
3.	Բոխենու գերանի մթերում վերին անտառային պահեստ (նվազագույն գին)	30059
4.	Բոխենու տեխնոլոգիական փայտի մթերում, բարձում, դուրս կրում (նվազագույն գին) (մինչև անտառային ներքին պահեստ)	24246
5.	Պահեստային վառելափայտի մթերում (նվազագույն գին)	13970
6.	Վառելափայտի մթերում, բարձում, դուրս կրում (ներքին անտառային պահեստ միջին հեռ. 0.3կմ)	7713
7.	Վառելափայտի մթերում թափուկից, բարձում, դուրս կրում (ներքին անտառային պահեստ միջին հեռ. 0.3կմ)	5362
8.	Հաճարենու գերանի մթերում (նվազագույն գին)	56308
9.	Կաղնու, հացենու, լոբենու գերանի մթերում (նվազագույն գին)	84307

»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022թ.

N 433-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի «Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց կողմից գույքն օգտագործման տրամադրելու հատուկ կարգը և պայմանները սահմանելու և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 4-ի N 193-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 199-Ն որոշմամբ սահմանված կարգի՝

1) 2-րդ, 10-րդ և 11-րդ կետերում «հյուրանոցներ» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «հյուրանոցային տնտեսության օբյեկտներ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

2) 3-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«4) ֆինանսական ծանր կացության մեջ հայտնված անձ կամ ընտանիք՝ այն անձը կամ ընտանիքը, որի միջին ամսական տնօրինվող եկամուտը՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով, չի գերազանցում 65 000 ՀՀ դրամը:».

3) 8-րդ կետում «սահմանվում են հետևյալ չափերով վարձավճարներ.» բառերը փոխարինել «սահմանվում են ամսական վարձավճարներ հետևյալ չափերով՝» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

21 ապրիլի 2022թ.

N 434-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի մարտի 28-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ  
ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ՝</b> այդ թվում՝	-	-	-	-
<b>04</b>			<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	-	-	-
	<b>3</b>		Վառելիք և էներգետիկա	-	(100 000,0)	(250 000,0)	(350 000,0)
		5	Էլեկտրաէներգիա	-	(100 000,0)	(250 000,0)	(350 000,0)
		01	Էներգետիկ ոլորտի զարգացման և սուբսիդավորման ծրագրեր	-	(100 000,0)	(250 000,0)	(350 000,0)
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	-	(100 000,0)	(250 000,0)	(350 000,0)
	<b>9</b>		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	100 000,0	250 000,0	350 000,0
		1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	100 000,0	250 000,0	350 000,0
		04	Ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով Արցախի Հանրապետության շրջանների կարողությունների զարգացման ծախսեր	-	100 000,0	250 000,0	350 000,0
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	-	100 000,0	250 000,0	350 000,0

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022թ.

N 435-Ն

ք. Ստեփանակերտ

**ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածները, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «զ» ենթակետը և 25-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ (այսուհետ՝ ընկերություններ) և պետական ոչ առևտրային կազմակերպություններ (այսուհետ՝ կազմակերպություններ)՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ ըստ ենթակայության.

1) ընկերությունների և կազմակերպությունների լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողովներ)՝ կազմերում ընդգրկելով հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման կամ համապատասխան լիազորված պետական մարմնի (երկու անդամ՝ հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղար), Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (մեկ անդամ), Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (մեկ անդամ), Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի (մեկ անդամ) և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ) ներկայացուցիչներին.

2) հանձնաժողովների ստեղծումից հետո երկօրյա ժամկետում ապահովել ընկերությունների և կազմակերպությունների համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների և գույքային իրավունքների հանձնումը հանձնաժողովներին.

3) հաստատել հանձնաժողովների կողմից կազմված լուծարման հաշվեկշիռները.

4) ընկերությունների և կազմակերպությունների լուծարման աշխատանքներն ավարտելուց հետո Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել դրանց գործունեության դադարեցման պետական գրանցման աշխատանքները:

3. Սահմանել, որ ընկերությունների և կազմակերպությունների լուծարումից հետո՝

1) պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած՝

ա. դրամական միջոցներն ուղղվելու են Արցախի Հանրապետության պետական բյուջե,

բ. անշարժ գույքն ամրացվելու է Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին,

գ. շարժական գույքն ամրացվելու է համապատասխան պետական կառավարչական հիմնարկին.

2) լուծարման հաշվեկշիռը կազմելու օրվա դրությամբ ընկերությունների և կազմակերպությունների դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները փոխանցվում են Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**  
**ԼՈՒԾԱՐՎՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	ՀՎՀՀ	Լուծարվող փակ բաժնետիրական ընկերություն կամ պետական ոչ առևտրային կազմակերպություն	Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման կամ լիազորված պետական մարմին
1.	90281413	«Հադրութի շրջանային բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերություն	Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն
2.	90014464	«Շահումյանի շրջանային բուժմիավորում» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
3.	90341167	«Շուշիի շրջանային բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերություն	
4.	10000655	«Ա. Բունիայանի անվան Քաշաթաղի շրջանային բուժմիավորում» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
5.	90280866	«Հադրութի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022թ.

N 436-Ն

ք. Ստեփանակերտ

ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածները, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը և 25-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ (այսուհետ՝ ընկերություններ) և պետական ոչ առևտրային կազմակերպություններ (այսուհետ՝ կազմակերպություններ)՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության Ասկերանի, Հաղրութի, Մարտակերտի, Մարտունու, Շուշիի և Շահումյանի շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ ըստ ենթակայության.

1) ընկերությունների և կազմակերպությունների լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողովներ)՝ կազմերում ընդգրկելով հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման կամ համապատասխան լիազորված պետական մարմնի (երկու անդամ՝ հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղար), Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (մեկ անդամ), Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (մեկ անդամ), Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի (մեկ անդամ) և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ) ներկայացուցիչներին.

2) հանձնաժողովների ստեղծումից հետո երկօրյա ժամկետում ապահովել ընկերությունների և կազմակերպությունների համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների և գույքային իրավունքների հանձնումը հանձնաժողովներին.

3) հաստատել հանձնաժողովների կողմից կազմված լուծարման հաշվեկշիռները.

4) ընկերությունների և կազմակերպությունների լուծարման աշխատանքներն ավարտելուց հետո Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել դրանց գործունեության դադարեցման պետական գրանցման աշխատանքները:

3. Սահմանել, որ ընկերությունների և կազմակերպությունների լուծարումից հետո՝

1) պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած՝

ա. դրամական միջոցներն ուղղվելու են Արցախի Հանրապետության պետական բյուջե,

բ. անշարժ գույքն ամրացվելու է Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին,

գ. շարժական գույքն ամրացվելու է համապատասխան պետական կառավարչական հիմնարկին.

2) կազմակերպության լուծարման հաշվեկշիռը կազմելու օրվա դրությամբ ընկերությունների և կազմակերպությունների դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները փոխանցվում են Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**  
**ԼՈՒԾԱՐՎՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	ՀՎՀՀ	Լուծարվող փակ բաժնետիրական ընկերություն կամ պետական ոչ առևտրային կազմակերպություն	Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման կամ լիազորված պետական մարմինը
1.	90073803	Ասկերանի շրջանի «Ակնադրյուրի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմ
2.	90073785	«Ավետարանոցի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
3.	90074255	«Ասկերանի շրջանի Ակնադրյուրի Վ. Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
4.	90074308	«ՈՒՂՏԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
5.	90074316	«Ասկերանի շրջանի Մադաթաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
6.	90074383	«Ասկերանի շրջանի Ավետարանոցի Ի. Աթայանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
7.	90074609	Ասկերանի շրջանի «Սղնախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
8.	90074881	«ՋՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
9.	90282957	«ԼՂՀ Հաղործի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Հաղործի շրջանի վարչակազմ
10.	90282973	ԼՂՀ Հաղործի շրջանի «Դրախտիկի Վ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
11.	90282981	ԼՂՀ Հաղործի շրջանի «Մարիամաձորի Ն.Սայիյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
12.	90283006	ԼՂՀ Հաղործի շրջանի «Ջրակուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
13.	90283014	ԼՂՀ Հաղործի շրջանի «Նորաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
14.	90283022	ԼՂՀ Հաղործի շրջանի «Ազոխի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
15.	90283049	ԼՂՀ Հաղործի շրջանի «Տումու Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
16.	90283057	ԼՂՀ Հաղործի շրջանի «Ակնադրյուրի Վ. Ամիրջանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
17.	90283065	ԼՂՀ Հաղործի շրջանի «Խանձաձորի Հ. Այվազյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
18.	90283073	ԼՂՀ Հաղործի շրջանի «Առաքելի Ս. Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
19.	90283081	ԼՂՀ Հաղործի շրջանի «Արևշատի Մ. Զաքարյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	



20.	90283118	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Հակակվի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
21.	90283126	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Քյուրաթաղի Գ. Գասպարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
22.	90283134	«Այգեստանի Ա. Բալայանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
23.	90283142	ԼՂՀ ՀԱԴԴՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ «ՏՈՂԻ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
24.	90283169	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Վարդաշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
25.	90283177	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Թաղասեռի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
26.	90283193	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Առաջամուղի Ջ.Եսայանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
27.	90283203	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Թաղոտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
28.	90283211	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Խծաբերդի Վ.Գրիգորյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
29.	90283238	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Բանաձորի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
30.	90283254	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Մոխրենեսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
31.	90283262	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Հին Թաղերի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
32.	90283289	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Մեծ Թաղերի Խոտյակովի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
33.	90283297	ԼՂՀ Հաղորդի շրջանի «Ուխտաձորի Ա.Սկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
34.	90283598	ԱՀ ՀԱԴԴՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ «ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
35.	90282501	«Առաքելի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
36.	90214695	«Հաղորդի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
37.	90282416	«Ազոխի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
38.	90282853	«Դրախտիկի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
39.	90282097	«Հաղորդի Ավ. Իսահակյանի անվան շրջանային կենտրոնական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
40.	90282776	«Հաղորդի մշակույթի և երիտասարդության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
41.	90282595	«Միջագետ» փակ բաժնետիրական ընկերություն		
42.	90144174	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Մատաղիսի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմ
43.	90144115	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Թալիշի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
44.	90144837	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Թալիշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		
45.	90144914	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Մատաղիսի Ակ. Ռադիկ Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն		

46.	90145014	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Նոր Կարմիրավանի Յակով Գալստյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
47.	90145065	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Նոր Մարաղայի Վազիֆ Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
48.	90145073	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Նոր Սեյտուկանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
49.	90145118	ԼՂՀ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ «ՆՈՐ ԱՅԳԵՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
50.	90145169	ԼՂՀ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ «ՆՈՐ ՀԱՅԿԱԶՈՒՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
51.	90214378	ԼՂՀ «Մարտունու շրջանի Սարգսաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմ
52.	90214412	ԼՂՀ «Մարտունու շրջանի Թաղավարդի Ա. Գրաշու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
53.	90214447	ԼՂՀ «Մարտունու շրջանի Շեխերի Նիկողոս և Հերմինե Նիկողոսյանների անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
54.	90214498	ԼՂՀ «Մարտունու շրջանի Վազգենաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
55.	90214575	ԼՂՀ «Մարտունու շրջանի Ջիվանիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
56.	90214679	ԼՂՀ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԻ ՀՐԱՅՐ ՀԱՄԼԵՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
57.	90342881	Շուշիի շրջանի «Քարին տակի Հ. Ղարախանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմ
58.	90342857	Շուշիի շրջանի «Քիրսավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
59.	90342599	«Քարին տակի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
60.	90341923	«Շուշիի կենտրոնական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
61.	90342617	«Շուշիի մշակույթի և երիտասարդության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
62.	90036534	«Շահումյանի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմ
63.	90036577	«Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
64.	90036843	«Եղեգնուտի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
65.	90036904	«Ծարի Սպարապետ Վ. Սարգսյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
66.	90037098	«Զուարի Ն.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
67.	90036731	«Նոր Բրաջուրի Ս.-Ս. Էրումյանների անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
68.	90036886	«Դադիվանքի Ա. Արմենակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
69.	90036947	«Նոր Ղարաչինարի Ա.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	

70.	90036723	«Նոր Վերինշենի Ջ. Ջալալյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
71.	90036758	«Նոր Գետաշենի Վ. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
72.	90036782	«Նոր Մանաշիդի Հ.Վարդանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
73.	90036827	«Հավնաթաղի Շ.Սարգսյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
74.	90036835	«Նոր Էրբեջի Հ. Ջառահյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
75.	90036851	«Նոր Խարխափուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
76.	90036939	«ՔՆԱՐԱՎԱՆԻ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
77.	90018422	«Շահումյանի «Խաչեն» մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
78.	90009406	«Եղեգնուտի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
79.	90009406	ԼՂՀ Շահումյանի շրջանի «Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
80.	90030477	«Շահումյանի մշակույթի և երիտասարդության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
81.	90018105	«Նոր Շահումյան» փակ բաժնետիրական ընկերություն

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022թ.

N 437-Ն

ք. Ստեփանակերտ

**«ՄԵՐԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻ  
ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածները, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը և 25-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջարկում է**.

1. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Մերան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) և մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ (այսուհետ՝ կազմակերպություններ)՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության Քաջաթաղի շրջանի վարչակազմի ղեկավարին

1) ընկերության և կազմակերպությունների լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողովներ)՝ կազմերում ընդգրկելով Արցախի Հանրապետության Քաջաթաղի շրջանի վարչակազմի (երկու անդամ՝ հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղար), Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (մեկ անդամ), Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (մեկ անդամ), Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի (մեկ անդամ) և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ) ներկայացուցիչներին.

2) հանձնաժողովների ստեղծումից հետո երկօրյա ժամկետում ապահովել ընկերության և կազմակերպությունների համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների և գույքային իրավունքների հանձնումը հանձնաժողովներին.

3) հաստատել հանձնաժողովների կողմից կազմված լուծարման հաշվեկշիռները.

4) ընկերության և կազմակերպությունների լուծարման աշխատանքներն ավարտելուց հետո Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել դրանց գործունեության դադարեցման պետական գրանցման աշխատանքները:

3. Սահմանել, որ ընկերության և կազմակերպությունների լուծարումից հետո՝

1) պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած՝

ա. դրամական միջոցներն ուղղվելու են Արցախի Հանրապետության պետական բյուջե,

բ. անշարժ գույքն ամրացվելու է Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին,

գ. շարժական գույքն ամրացվելու է «Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին.

2) լուծարման հաշվեկշիռը կազմելու օրվա դրությամբ ընկերության և կազմակերպությունների դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները փոխանցվում են Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**  
**ԼՈՒԾԱՐՎՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ**  
**ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	ՀՎՀՀ	Լուծարվող փակ բաժնետիրական ընկերություն կամ պետական ոչ առևտրային կազմակերպություն
1.	10003232	«Բերձորի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
2.	10004595	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Կոլսականի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
3.	10004054	«Մոշաթաղի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
4.	10003094	«ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Բերձոր» ժողգործիքների համույթ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
5.	10001607	«Բերձորի քաղաքային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն
6.	10001871	«Բերձորի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
7.	10004115	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
8.	10004123	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Բերձորի Վ.Զատիկյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
9.	10004107	«Քաշաթաղի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
10.	10004158	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Օիժեռնավանքի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
11.	10004166	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Օռբաձորի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
12.	10004174	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Վանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
13.	10004182	ԼՂՀ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ «ՄՈՒՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
14.	10004219	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Արտաշավիի Լ. Ազգալոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
15.	10004227	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Արծվաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
16.	10004235	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Միրիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
17.	10004243	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Ղազարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
18.	10004251	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Ներքին Սուսի Ս. Հանեյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
19.	10004278	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Ուռեկանի Ն. Գույումջյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
20.	10004286	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Իշխանաձորի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
21.	10004294	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Կերենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
22.	10004304	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Աղաձորի Հակոբ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
23.	10004312	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
24.	10004339	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
25.	10004347	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Մշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
26.	10004355	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Վարդուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
27.	10004363	ԼՂՀ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ «ՓԱԿԱՀԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական

		ոչ առևտրային կազմակերպություն
28.	10004371	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Մարտունաշենի Մ. Պապիկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
29.	10004398	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Տանձուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
30.	10004408	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Հակարիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
31.	10004416	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Վաղագինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
32.	10004424	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Մովսեսաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
33.	10004432	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Ծաղկաբերդի Ա. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
34.	10004459	ԼՂՀ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ «ՀԵՐԻԿԻ Ռ. ԱԲԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
35.	10004467	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Գանձայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
36.	10004475	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Գողթանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
37.	10004483	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Այգեհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
38.	10004491	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Հոչանցի Ա. Վարդանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
39.	10004501	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Վուրգավանի Աբրահամ և Էլիզաբեթ Պողոսյանների անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
40.	10004528	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Սոնասարի Ս. Կյուրեղյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
41.	10004536	ԼՂՀ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ «ԿՈՎՍԱԿԱՆԻ Թ. ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
42.	10004544	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Աղանուսի Ա. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
43.	10004552	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Դրախտաձորի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
44.	10004579	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Արվականի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
45.	10004587	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Բազմատուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
46.	10004605	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Աղավնատան Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
47.	10004613	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Մոշաթաղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
48.	10004621	ԼՂՀ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ «ՎԱԿՈՒՆԻՍԻ Վ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
49.	10004648	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Տիգրանավանի Պ. Առնոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
50.	10004664	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Միջնավանի Գ. Ստարավոյտովայի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
51.	10004672	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Քարեգահի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
52.	10004699	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Լեոնահովիտի Ազնիվ և Միսաք Տատրյանների անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
53.	10004709	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Քաշունիքի Գ. Ճաղարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
54.	10004717	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Դիցմայրիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
55.	10004725	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Հայկազյանի Հ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
56.	10004733	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Երիցվանքի Մ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
57.	10004741	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Շալուայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
58.	93000348	ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ «ՀԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

59.	93000071	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Քարոտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
60.	_____	«Մերան» փակ բաժնետիրական ընկերություն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022թ.

N 439-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 17-Ի N 222-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 17-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 222-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 4-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում «մեկամսյա» բառը փոխարինել «ողջամիտ» բառով,

բ. 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում «ֆինանսների նախարարին» բառերը փոխարինել «ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին» բառերով,

գ. 3-րդ ենթակետում «դիմել» բառից հետո «դատական ակտերի հարկադիր» բառերը փոխարինել «Հարկադիր» բառով, իսկ ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի» բառերը՝ ««Հարկադիր կատարման մասին» օրենքի» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.

«ա. ֆիզիկական անձ (կամ նրա ամուսին կամ նրա ժառանգ), ով 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հաշվառված և փաստացի բնակվում էր կամ ով փաստացի բնակվում էր և ում աշխատանքի վայրը գտնվում էր Արցախի Հանրապետությունում: Սույն պարբերությամբ սահմանված հաշվառման և փաստացի բնակության կամ աշխատանքի վայրն Արցախի Հանրապետությունում գտնվելու հանգամանքը չի տարածվում շահառու հանդիսացող Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված, մահացած, անհայտ բացակայող համարվող կամ 1-ին խմբի հաշմանդամություն ձեռքբերած զավակ ունեցող ծնողների վրա,

բ. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում գործունեություն իրականացրած իրավաբանական անձ (բացառությամբ ոչ առևտրային կազմակերպությունների).».

բ. 2-րդ կետի 7-րդ ենթակետից հանել «բացառապես» բառը, իսկ «փոխառություն» բառից հետո լրացնել «:» կետադրական նշանը և հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն ենթակետով սահմանված՝ շահառուի կողմից գրավադրված դրամական միջոցների հանրագումարի նկատմամբ սահմանափակումը չի տարածվում ծրագրի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված շահառուների կողմից գրավադրված դրամական միջոցների հանրագումարի վրա:»,

գ. 2.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետ.

«3.1 Ծրագրով սահմանված շահառու ճանաչվելու նպատակով հիմնադրամներին դիմելու վերջնաժամկետ է հանդիսանում 2022 թվականի հունիսի 1-ը:»,

ե. 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«9. Շահառուի կողմից, բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված շահառուի՝

1) մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը բնակտարածքը (նաև հիփոթեքով վերանորոգված) օտարելու դեպքում՝ սույն ենթաբաժնով սահմանված աջակցությունը չի տրամադրվում, իսկ ստացած աջակցության գումարը եռօրյա ժամկետում ենթակա է վերադարձման Արցախի Հանրապետության պետական բյուջե.

2) բնակելի տարածք գնելու կամ կառուցելու նպատակով ստացված հիփոթեքային վարկի պարագայում տվյալ բնակելի տարածքը վարձակալությամբ տրամադրելու դեպքում՝ սույն ենթաբաժնով սահմանված աջակցությունը չի տրամադրվում, իսկ վարձակալությամբ տրամադրված ժամանակահատվածում ստացված աջակցության գումարը եռօրյա ժամկետում ենթակա է վերադարձման Արցախի Հանրապետության պետական բյուջե:»,

զ. 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ սպառողական վարկային պարտավորություններ ունեցող շահառուին տրամադրվում է աջակցություն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ վարկի մայր գումարների մնացորդների հանրագումարի առավելագույնը 3 000 000.0 ՀՀ դրամի և դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսների ու սպասարկման վճարների հանրագումարի չափով: Վարկային պարտավորությունները 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ժամկետանց լինելու դեպքում վարկերի մայր գումարների մնացորդների նկատմամբ հաշվեգրված տոկոսների ու սպասարկման վճարների մասով աջակցությունը տրամադրվում է վարկերի մայր գումարների մնացորդների 10 տոկոսը չգերազանցող չափով: Օվերդրաֆտի/վարկային գծի պարագայում, որպես պարտավորության մայր գումարի մեծություն ընդունվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում օվերդրաֆտի/վարկային գծի օգտագործված մասի առավելագույն չափը:»,

է. 12-րդ կետի 2-րդ ենթակետում «հաշվարկված տոկոսագումարի» բառերը փոխարինել «հաշվեգրված տոկոսագումարների և սպասարկման վճարների հանրագումարի» բառերով,

ը. 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«15. Սույն ենթաբաժնում սահմանված աջակցությունից (բացառությամբ 19-րդ կետով սահմանված) օգտվում է այն շահառուն, որն աջակցության ժամանակահատվածում (բացառությամբ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը, ինչպես նաև հիվանդության պատճառով կամ սեզոնային գործունեությամբ պայմանավորված գործունեությունը դադարեցրած ժամանակահատվածի) Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության, իսկ ծրագրի 2-րդ կետի 12-րդ ենթակետով նշված անձի դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքի համաձայն

իրականացնում է տնտեսական գործունեություն, բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված շահառուների:»,

թ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18.1-ին կետ.

«18.1 Ծրագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ գյուղատնտեսական վարկային պարտավորություններ ունեցող շահառուին, որի կողմից տվյալ վարկերի հաշվին ձևավորված կամ ձևավորման փուլում գտնվող ակտիվը, անկախ գրավի առարկա լինելու հանգամանքից, հանդիսացել է (կհանդիսանար) վարկի մարման աղբյուր և ամբողջությամբ մնացել է Աղբյուրների կողմից բռնագավթված տարածքներում, տրամադրվում է աջակցություն վարկերի մայր գումարների մինչև 10 000 000.0 ՀՀ դրամը չգերազանցող հանրագումարային մնացորդի և դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարների ու սպասարկման վճարների հանրագումարի չափով: Վարկային պարտավորությունը 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ժամկետանց լինելու դեպքում՝ վարկերի մայր գումարների մնացորդների նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարների և սպասարկման վճարների մասով աջակցությունը տրամադրվում է վարկերի մայր գումարների մնացորդների հանրագումարի 10 տոկոսը չգերազանցող չափով:»,

ժ. 23-րդ, 24-րդ և 25-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«23. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված շահառուների խմբին, բացի ծրագրի 5-րդ, 11-րդ և 16-րդ կետերում նշված աջակցությունից, ընդհանուր տրվում է նաև մինչև 7 000 000.0 ՀՀ դրամ լրացուցիչ աջակցություն, որն առաջնահերթության կարգով ուղղվում է 2-րդ կարգի հաշմանդամի, այնուհետև նրա ամուսնու, հետո համատեղությամբ բնակվող զավակի, ապա ծնողի վարկերի մայր գումարների մասով պարտավորությունների կատարմանը՝ ծրագրի 26-րդ կետով սահմանված կարգով:

24. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում նշված շահառուների խմբին, բացի ծրագրի 5-րդ, 11-րդ և 16-րդ կետերում նշված աջակցությունից, ընդհանուր տրվում է նաև մինչև 5 000 000.0 ՀՀ դրամ լրացուցիչ աջակցություն, որն առաջնահերթության կարգով ուղղվում է 3-րդ կարգի հաշմանդամի, այնուհետև նրա ամուսնու վարկերի մայր գումարների մասով պարտավորությունների կատարմանը՝ ծրագրի 26-րդ կետով սահմանված կարգով:

25. Ծրագրի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված շահառուների խմբին, բացի ծրագրի 5-րդ, 11-րդ և 16-րդ կետերում նշված աջակցությունից, ընդհանուր տրվում է նաև մինչև 3 000 000.0 ՀՀ դրամ լրացուցիչ աջակցություն, որն ուղղվում է ծրագրի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված մարմինների կողմից հիմնադրամների ներկայացված ցուցակներում ընդգրկված անձի, այնուհետև նրա ամուսնու վարկերի մայր գումարների մասով պարտավորությունների կատարմանը՝ ծրագրի 26-րդ կետով սահմանված կարգով:»,

ժա. 35-րդ կետից հանել «օրինական» բառը,

ժբ. 36-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«36. Հիմնադրամների կողմից բռնագանձման արդյունքում հիմնադրամներին սեփականության իրավունքով փոխանցված կամ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից բռնագանձված և հիմնադրամներին օտարված բնակելի տարածքի նախկին սեփականատիրոջ կամ նրա ժառանգի և հիմնադրամների միջև կարող է կնքվել հիփոթեքային փոխառության (կամ տարածամկետ վճարման պայմանով անշարժ գույքի օտարման) պայմանագիր՝ ծրագրի 37-րդ կետով սահմանված պայմանի ապահովմամբ և շահառուին կամ նրա ժառանգին ծրագրով սահմանված աջակցություն ստանալու իրավունքի վերապահմամբ:»,

ժգ. 37-րդ կետում «տարեկան կտրվածքով նախատեսելով ոչ ավել, քան 1 800 000.0» բառերը փոխարինել «նախատեսելով մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը ոչ ավել, քան 5 400 000.0» բառերով,

ժդ. 38-րդ կետում «օգոստոսի 1-ն» բառերը փոխարինել «2023 թվականի հոկտեմբերի 1-ն» բառերով,

ժե. 40-րդ կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետ.

«4) շահառուի (բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված շահառուների) աջակցության ստացման ժամանակահատվածում բնակելի տարածք գնելու կամ կառուցելու նպատակով ստացված հիփոթեքային վարկի պարագայում տվյալ բնակելի տարածքը, հիմնադրամի և(կամ) այլ մարմիններից ստացված տեղեկությունների համաձայն, վարձակալությամբ տրամադրվելու փաստը արձանագրելու դեպքում:»,

ժզ. 43-րդ կետում «2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «2-րդ, 3-րդ և 4-րդ» բառերով,

ժե. 43.1-ին կետում «կադաստրի և պետական գույքի կառավարման» բառերը փոխարինել «նյութական վնասների հարցերի» բառերով,

ժը. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43.2-րդ կետ.

«43.2 Եթե շահառուն միջոցառման շրջանակում ստացել է աջակցություն նախքան ծրագրի շրջանակում շահառու ճանաչվելը և (կամ) վարկային պարտավորությունների մասով աջակցություն ստանալը, ապա նրան ծրագրի շրջանակում տրամադրվում է աջակցություն՝

1) տվյալ գույքի և (կամ) ակտիվի կորստով պայմանավորված վնասի՝ միջոցառման շրջանակում հաստատված չափի (այսուհետ՝ վնասի չափ) և տրամադրված աջակցության տարբերության չափով, եթե վնասի չափը գերազանցում է աջակցության ենթակա վարկային պարտավորությունների գումարը.

2) աջակցության ենթակա վարկային պարտավորությունների գումարի և միջոցառման շրջանակում տրամադրված աջակցության տարբերության չափով, եթե վարկային պարտավորությունների գումարը գերազանցում է վնասի չափը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2022 թվականի ապրիլի 15-ի

«ԱՐՑԱՄԿԱԶ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ՄՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ  
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ  
30-Ի N 31-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՄԻՆ

N 10-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 15-րդ և 16-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 30-ի N 1-Ն որոշումը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 23-ի N 735-Ն որոշումն ու «Արցախզագ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2022 թվականի մարտի 22-ի N 195/3-2 գրությամբ ներկայացված հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել «Արցախզագ» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

1) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձևը՝ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝

$$P_{\text{գ}} = 233,9 * E,$$

որտեղ՝

$P_{\text{գ}}$ -ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածում վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (ՀՀ դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

$E$ -ն յուրաքանչյուր հաշվետու ամսվա նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է,

բ. սակագինը՝ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝ ամսական մինչև 10 000 խորանարդ մետր բնական գազի համար՝ սույն կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված սակագինն հավասար, իսկ ամսական 10 000 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝ սույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված բանաձևի համաձայն հաշվարկվող սակագնին հավասար.

2) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող անձանց վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P_q = 233,9 * E,$$

որտեղ՝

**P<sub>q</sub>**-ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող անձանց վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (ՀՀ դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. սակագինը՝ ամսական մինչև 10 000 խորանարդ մետր բնական գազի համար՝ **143 700 ՀՀ դրամ**՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝ 10 000 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝

$$P = 265,81 * E,$$

որտեղ՝

**P**-ն սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հաշվետու ամսում 10 000 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (ՀՀ դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 30-ի «Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 44Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 31-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 16-ից:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2022 թվականի ապրիլի 15

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2022 թվականի ապրիլի 15-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 11-Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածը և հաշվի առնելով «Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի մարտի 21-ի և 24-ի գրությունները՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 27-ի ««Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերությանը «Արցախագազ ՋԷԿ-3» ջերմաէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 56-Ա որոշման 1-ին կետում և 2-րդ կետով սահմանված հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում «Մարտունի քաղաքի Աբրիկավան թաղամաս թիվ 1 խճուղի թիվ 32 հասցեում» բառերը փոխարինել «Ստեփանակերտ քաղաքի Մ. Մաշտոցի փողոցի թիվ 14 հասցեում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2022 թվականի ապրիլի 15  
ք. Ստեփանակերտ

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

15 ապրիլի 2022թ.

N 33-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԱՄԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 14.04.2022թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

**հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

<b>N</b>	<b>Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը</b>	<b>Գործունեության տեսակը</b>
1	«Ա-Վ-Է» ՍՊԸ ք. Ստեփ., Բաղրամյան փող., շենք 3/20	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
2	«ՀԱՍՀԻԴՐՈ» ՍՊԸ Մարտակերտի շրջան, գ. Վանք	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**